



Հակոբ Պարոնյան

Ազգային ջոջեր

ՄԿՐՏԻՉ ԷՍԱՅԵԱՆ

Իմ այսօրուան կարծիքս այն է, որ անհնար է մարդու մը նկարագրին վրայ կատարեալ գաղափար ունենալ՝ առանց նախապէս գիտնալու այդ անձին արհեստը: Եւ որպէսզի չկարծուի, թէ յառաջաբանս ծիծաղաշարժ ընելու համար այլանդակ կարծիքներ կը քարոզեմ, կը փութամ յայտնել, որ այս օրերս հանդիպեցայ մարդու մը՝ որուն ուղեղը, իր խօսքերէն դատելով, առաձգական է, այսինքն քաշելուդ պէս կ'երկննայ եւ թող տալուդ պէս իր առաջին չափին կը վերածուի. եւ երբ այս մարդուն արհեստն գիտնալ ուզեցի, սա պատասխանն առի.

Լասթիկ կը ծախէ:

Այս պատասխանը խիստ գոհացուցիչ գտայ, եւ վերջապէս համոզուեցայ, որ ինչպէս լեռնային վայրերը քաջ եւ պատերազմող կ'ընեն իրենց բնակիչներն, այնպէս ալ կտան փափուկ կ'ընէ այն մարդերն, որք կտաւի առետուրով կը գբաղին, մանաւանդ թէ փոփոխամիտ կ'ընէ գանոնք, եթէ նկատողութեան առնենք այսօրուան վաճառուած կտաններն, որ ջուր տեսնելուն պէս կը նետեն իրենց գոյնը, թէեւ կան մարդեր ալ, որ առանց ջուր տեսնելու կը փոխեն իրենց կարծիքը: Եթէ չէք ձանձրանար՝ օրինակ մ'ալ կու տամ. ինչպէս որ ծովեզերեայ ժողովուրդները վաճառական կ'ըլլան, այնպէս ալ մեր Ընդհանուր ժողովին բնակիչները շատախօս կ'ըլլան. եւ մենք, որ շատ անգամ իրարու կեղեւներու վրայ կը հիմնենք մեր դատողութիւնները, լեռան քաջութիւնը մարդու կը

վերագրենք եւ ժողովին շատախօսութիւնը երեսփոխաններու վրայ կը բեռցունենք:

Արհեստներու մարդուս վրայ ունեցած ազդեցութիւններն անհերքելի փաստերով ցոյց տալէս ետքը, կը մնայ ինձ երկու խօսք ալ ընել երկաթի վրայ, որով կը զբաղի այն անձը, որու կենսագրութիւնն կ'ընենք հոս:

Արդէն ամէնուս ծանօթ են այն ծառայութիւններն, զորս այս մետաղը նուիրեց մարդկութեան, ինչպէս նաեւ աւելի ծանօթ են այն չարիքներն, զորս հասուց աշխարհիս: Դանակները, գէնքերը, թնդանօթները, մեքենաները, կամուրջները, գրահատորները բամբակէ չեն, ամէնն ալ իրենց գոյութիւնը երկաթի կը պարտաւորին: Ժամանակաւ վարպետ օրէնսդիրին մէկն, որ անշուշտ ոսկի չունէր, եւ թերեւս փոխառութիւն ընելու ալ կ'ամչնար, առանց կարմրելու երկաթեայ դրամ կոխեց, որպէսզի դիմացկուն ըլլայ եւ թղթեայ դրամին պէս՝ քանի մը օրուան մէջ չպատռուի: Պատմութիւնը չիշէր, թէ այդ երկաթեայ դրամը ի՞նչ ընդունելութիւն գտաւ, ո՛րչափ ատեն տեւեց եւ վերջէն ի՞նչպէս վերցուեցաւ հրապարակէն: Այս մետաղն մեր ազգէն շնորհակալութիւն սպասելու բնաւ իրաւունք չունի, վասնզի մեզի հետ աղէկ վարուած չէ, իւր օգուտներն ուրիշներու տուած է եւ վնասները մեզի, եւ եթէ քանի մը վաճառականներ չյարուցանէր մեր մէջը՝ իւր անունն մեր բերանին մէջ գործ չէր ունենար:

Ընթերցողն այս տողերը կարդալէն ետքը կը փափաքի գիտնալ՝ թէ այս մետաղն ի՞նչ ազդեցութիւն ըրած է Մկրտիչ Էֆենտի Էսայեանի վրայ, թէ Մկրտիչ Էֆենտիի միտքը երկաթի պէս հաստատ է, թէ գրահատրէ չվնասուիր: Հասարակութիւնը շատ իրաւունք ունի այս հարցումն ընելու, վասն զի քանի մը անգամներ իւր աչերովը տեսաւ, եւ ոչ թէ ուրիշներուն աչերով, երկաթեայ կամուրջին գրահատրէ վնասուիլը: Հասարակութիւնն հետաքրքիր է նաեւ հասկնալու, թէ մէկն այս անձին կարծիքները կրակին մէջ տաքցունելէն ետքը՝ կարո՞ղ է, թէ չէ, անոնց իւր ուզած ձերլ տալ:

Այս հարցումներուն կանոնատր կերպով պատասխանելու համար, հարկ էր ինձ դիմել այնպիսի մէկու մը, որ Էսայեանը խիստ մօտէն ճանաչէր: Այս ալ հերիք չէր, մօտէն ճանաչելն իւր արժէքը կը կորսնցնէ՝ եթէ իրեն ընկեր չունենայ ճշմարիտ խօսիլը: Գոհ եմ, որ ուզածս գտայ, այո՛, շատ գոհ եմ, վասն զի

ճշմարտախօս մը գտնելն այսօր այնչափ դժուար է, որչափ որ դժուար է թաղային վարժարաններու մէջ կարգ ու կանոն գտնելը եւ աղաչեցի զինքն, որ հաճի տեղեկութիւններ տալ ինձ այդ անձին վրայ: Բարեկամս սիրով ընդունեց խնդիրքս: Քանի մը օրէն ետքը՝ տեղական թղթատունէ նամակ մը ստացայ, որ կը պարունակէր ուզած տեղեկութիւններս, այնքան կանոնաւոր գրուած, որ ամենափոքր փոփոխութիւն մը անհրաւորութիւն համարելով՝ նոյնութեամբ կը հրատարակենք:

«Մկրտիչ Գեորգ Էսայեան, վաճառական, սեղանաւոր, ազգային երեսփոխան, Յարաբերութեան դիւանի ատենապետ, հայ աւագանոյ Մասնաժողովին անդամ, եւ բացի հանդերձեալ տիտղոսներէն, եւ այլն, եւ այլն, եւ այլն, կեանք առաւ Կեսարիոյ մէջ 1843-ին, բայց հոն շատ կանգ չառաւ, վասն զի ոչ այնքան սէր ունեցաւ իր միւս հայրենակցաց նման կեսարացի կոչուելով միայն գոհ լինելու, որքան իդձ ու տենչ տածեց կեսարացոց յատուկ գործունէութիւնն յինքեան անձնաւորելու:

Մկրիկը ծնածին պէս՝ Էսայեան մականունին ստուգաբանութիւնը խնդրեց եւ երբ իմացաւ, որ ոմանց կարծածին պէս Էսայի անունէն ծագած չէր այն, այլ Յիսուս բառին պարսկական Իսա թարգմանութեան աղաւաղումն էր, շատ սրտնեղեցաւ, թէ ինչո՞ւ իր կարծիքը չէին առած, իրեն ընծայեալ մականուան համար: Վասն զի Մկրիկ նախընտիր պիտի համարէր Է՛ սա ... մականունն ընդունել, եւ անոր բնութեան խնդիրը դնելն իր չափահասութեան վերապահել: Ուստի անմիջապէս կտրուկ ծանուցագիր մը ուղղեց իր ծնողաց, իմացնելու համար, թէ նշանաւոր մարդ մը լլլալու մտադիր է ինքն, եւ պատուիրելու համար, որ զինքն ըստ այնմ պատրաստեն:

Ծնողքը վախնալով, որ այս կրակոտ տղուն արիւնը գլուխը չցատկէ, խօսք տուին, որ սահմանափակ ասպարէզի մէջ չդնեն գնա, եւ ներշնչեն նմա ի մանկութենէն այն սկզբունքներն, որք իր ապագային անկիւնաքարերը պիտի լինէին:

Մանկիկն Մկրիկ այս ապահովութիւնները ձեռք բերելուն վրայ ուրախ՝ կերաւ, խմեց, զարգացաւ իր մօրը խնամոց ներքեւ Կեսարիոյ օդը շնչելով:

Երբ Մկրիկ պատանեկութեան հասակը թեւակոխեց, Կեսարիոյ հորիզոնը շատ նեղ եկաւ իրեն. հազիւ հայերէն ընթերցանութիւն ուսանելու միջոց գտաւ հոն: Ուստի՝ այն ինչ 14 տարեկան՝ ճամբայ ինկաւ Կեսարիայէն ի Կ. Պոլիս, ուղղակի Պալատու թաղը գնաց եւ տեղւոյն ազգային վարժարանը մտաւ:

Պատանին Մկրտիչ գործունէութեան առաջին փորձն այն տեղէն տալ ուզելով, բարձրագոյն դասարանէն սկսեալ գատկական հաւկթի պէս աստիճանաբար ակռային զարկաւ զանոնք իւր կարողութեան հետ բաղդատելու համար, եւ նախակրթարանի ստորին դասուն մէջ գնաց գետեղեցաւ, հսկայաքայլ բարձրագոյնն ելնելու համար:

Տասնէւչորս ամսոյ միջոցը բաւական եղաւ մեր աշխոյժ Մկրտիչին՝ դպրոցին ամենէն յառաջադէմ աշակերտը դառնալով՝ առաջին մրցանակներն յափշտակելու, եւ քերականութեան դասերն աւարտելով՝ հայերէնն ուսնելու այնչա՛փ, որչափ գիտեն այսօր մեր ազգային լրագրապետք, կամ աւելի ճիշտն ըսելու համար, որչափ չեն գիտեր այսօր մեծ մասն ազգային լրագրապետաց:

Միայն թէ բայերը սորվելու համար խեղճ դասատուին հոգին բերանը բերաւ, վասն զի Մկրտիչ անոնց կատարեալը միայն սորվիլ կ'ուզէր եւ ամեն օր կոփ կ'ընէր դասատուին հետ, որ միւս եղանակները վերցնէ արտաքսէ քերականութեան մէջէն. մանաւանդ ներկան ու ապառնի անկատարը խոնարհելու շատ կը դժկամակէր: Այս տպատրութեան գործնական հետեւանքն պահած է մինչեւ այսօր, երբ իւր ուշադրութիւնը գրաւող խնդրոյ կամ անձի մը վրայ կը խորհի, կը խօսակցի, կ'առաջադրէ եւ չգործեր, մեծ նեղութիւն կը զգայ սրտին մէջ, վասն զի մէջը բայի կատարեալ եղանակ չկայ, եւ չարամիտք կրնան զայն սին մեծամտութեան եւ կեղծ քաղաքավարութեան վերագրել:

Խիստ գեղեցիկ է Մկրտիչ Էֆենտիի այս հանգամանքն, եւ թերի կողմն այն է միայն, որ նորա արդի քերականութեան մէջ կատարեալին դասատրութիւնը մեր գիտցած դրութենէն կը տարբերի եւ երբեմն կարգն այնչափ ուշ կու գայ, որ քրիստոնէավայել համբերութիւն չունեցողները կը վիատեցնէ:

Դպրոցական ասպարէզէն առեւտրական ասպարէզը ցատկեց Մկրտիչ Էֆենտի, եւ մէկ կողմէ գաղիերէն, անգղիերէն եւ տոմարակալութիւն ուսնելով, միւս կողմէ

ստակ շահելու հետամտեցաւ:

Իւր առեստրոյն համար այնպիսի նիւթ մընտրել ուզեց, որ յաջողութեան ամեն պայմաններն ընծայէր, ուստի երկաթի վաճառականութեան ձեռնարկեց, որպէս զի ո՛չ գողէն վախնայ, ո՛չ հրդեհէն սոսկայ եւ ո՛չ ալ խոնաւը հոգայ: Հետեւաբար մեր Մկրտիչը երկաթ առաւ, երկաթ ծախեց, բայց անոր ժանգն ոսկոյ փոխարկեց, եւ սնտուկին մէջ դիզելէ ետեւ՝ վրան ելաւ ու բարձրէն դիտեց երկաթի միւս վաճառականներն, որք իրենց ծախսած ապրանքին անշարժութեան հանգամանքով տոգորուել եւ անոր հանքային բնութեան միայն ընդունակ եղեր էին:

Անոնք, որ Մկրտիչ էֆենտին բարեսիրտ մարդ կը ճանաչեն, կը կարծեն թէ շատ ցաւեցաւ նա իւր արհեստակցաց այդ յետամնաց վիճակին վրայ, իսկ անոնք, որ Մկրտիչ էֆենտիի քով յառաջադիմական բուռն իդձ մը կը տեսնեն, կ'ենթադրեն թէ կարի գոհ եղած լինի նա, միւս զամէնքը գերազանցած ըլլալուն վրայ: Իսկ մենք ո՛չ առաջիններուն հետ կը կարծենք եւ ո՛չ միւսներուն հետ կ'ենթադրենք, այլ պարզապէս երկուքին ալ կը հաւատամք:

Մկրտիչ էֆենտի 1859-ին դեռեւս դպրոցական՝ ազգային կենաց մէջ նետուեցաւ: Յիշեալ թուականին Պալատու ժողովրդական ընկերութիւնը հիմնողներէն մէկն ալ ինքն եղաւ, եւ անոր համարակալի պաշտօնն ստանձնելով, մինչեւ որ այդ ընկերութիւնը հազար ոսկոյ արժողութեամբ կալուած չգոյացուց թաղին վարժարանաց համար, իւր պաշտօնը չթողուց, եւ ամէն տարեգլուխ հաշուեկշիռ հրատարակելով, ընկերութեան արդեանց հետ իւր յաջողակութիւնն ու հաշուագիտութիւնն ի հրապարակ հանեց:

1868-ին երբ զինքն Ընտրողական ժողովոյ ատենապետ ընտրեցին Իսկիւտարցիք, ինքն ալ զարմացաւ, բայց երբ տեսաւ որ թաղին կուսակցութիւնները չէզոք ատենապետ մը գտնելու եւ զայն իրենց դիմակ ընելով իրարու հետ կռուելու համար զինքը կարգեր են, Խորհրդարանը թողուց, տուն քաշուեցաւ:

1870-ին Տնտեսական խորհրդոյ անդամ եղաւ եւ համարակալութեան ճիւղին հսկողութիւնն ստանձնելով՝ այնչափ հոգածութեամբ հսկեց պատրիարքարանի

տոմարներուն վրայ, որ Տիգրանեան իր աշխարհաժամօթ հրաշագործութեամբ հազիւ ուրեմն իր ժապաւինեալ հանգանակութեան տետրակը կրցաւ գողնալ պատրիարքարանէն, առանց մտքէն անցընելու, որ Տնտեսական խորհուրդն անոնց անփոփումն արձանագրած էր արդէն իր ատենագրութեանց մէջ, որով Տիգրանեանի հրաշքն ալ խայտառակուեցաւ, ինքն ալ:

1873-ին, երեսուն տարեկան ըլլալուն պէս, Պալատցիք զինքն ազգային երեսփոխան ընտրեցին, որպէս զի իրենց թաղին սանն ուրիշները չյափշտակեն: Մկրտիչ Էֆենտի տեսնելով, որ երեսփոխանութեան մէջ շատ խօսելու է քիչ գործելու համար, գնաց Քաղաքական ժողովոյ անդամ եղաւ, ազգային ասպարէզին ալ գործնական կողմը գտնելու համար: Քաղաքական ժողովին մէջ ժողովականներն իրենց պաշտօնին ազնութեան բարձրացնելու միջոցին վրայ կը խորհէր շատ անգամ, եւ երբ ինքզինքը խառն ժողովին մէջ գտնէր, բոլորովին այս մտածմամբ կը պաշարուէր: Հաւատացողներ կան, թէ Մկրտիչ Էֆենտի այդ միջոցը պիտի կրնար գտնել, եթէ այն միջոցին վանեցի Պօղոս վարդապետին եւ Խաչատուր կաթողիկոսի խնդիրները վրայ չգային, եւ Վարչութեան բոլոր անդամոց զանոնք արդարացնելու ճգանց դէմ միս մինակ խօսելէ եւ մաքառելէ ատեն գտնէր Մկրտիչ Էֆենտին:

Օր մը Վարչութեան նախագահն Ամբրոսիոս վարդապետը վոնտեց ժողովէն, որ նոյն միջոցին՝ իր եղբօր կնոջ դատին մէջ յաղթանակ կանգնելու համար՝ Կրօնական ժողովին անդամ եղեր էր, իրեն պէտք ունեցողներուն քուէովը: Ամբրոսիոս բաւական պինդ երես ունեցաւ յաջորդ նիստին ժողովարան մտնելու, եւ ժողովականք ալ բաւական սիրտ չունեցան ձայն հանելու: Մկրտիչ Էֆենտի զանի տեսածին պէս, առնել քալել ուզեց, բայց գլխին ֆէսը չգտաւ, վասն զի ատենապետն ուսույիկ մը առեր պահեր էր, որպէս զի Մկրտիչ Էֆենտի չկարենայ ձգել երթալ: Ժողովը վերջացածին պէս Մկրտիչ Էֆենտի շիտակ Ղալաթիա անցաւ եւ ֆէսը ծախեց, տեղը գլխարկ մ'առաւ, զոր մինչեւ այսօր կը գործածէ: Այնուհետեւ ամէն անգամ, որ ժողովարան եկած ատեն Ամբրոսիոսը հոն տեսնէր, նախ բարապան մը ներս կը դրկէր, իր աթոռին կոնակն անոր դարձնել կու տար, եւ յետոյ կ'անցնէր կը նստէր, որպէս զի զանի իրեն անդամակից չտեսնէ:

Ազգային ժողովին մէջ Մկրտիչ Էֆենտի ինք խօսելէ աւելի կը փափաքի, որ երեսփոխանք աղէկ խօսին: Եթէ աստենապետն ինք ըլլար՝ խօսիլ չգիտցող երեսփոխանները բեմն ելնելէ պիտի արգիլեր: Ոմանք կ'ըսեն, թէ Մկրտիչ Էֆենտի երկու տարիէ ի վեր ուխտած է լռիկ մնջիկ գործել ազգային խնդրոց մէջ, այն մեծ մարդոց նման, որք շատ բան կ'ընեն, բայց իրենք բնաւ չեն երեւիր: Այս ուխտին վերագրեցին, երբ Մկրտիչ Էֆենտի խոստացաւ Ազգային ժողովն Ղալաթիա գումարելու համար ս. պատրիարքն համոզել ու չհամոզեց:

Մկրտիչ Էֆենտի ի բնէ ընկերական մարդ է, բայց իր ծանօթներէն շատեր կան, որոնց ներկայութենէն կը նեղուի, մանաւանդ երբ քառորդ ժամէն աւելի տեւէ ու ինքը մինակ մնայ անոնց հետ: Իսկ բարեկամաց տեսակցութենէն այնչափ կ'ախորժի եւ կը գուարթանայ, որ դեռ գիտցուած չէ, թէ բարեկա՞մք աւելի գոհ կ'ըլլան իր սիրաբոյր ընդունելութենէն, թէ ինքն անոնց ներկայութենէն:

Պարագաներ կան, յորում սոխակին չափ քաղցրախօս կը կտրի եւ Տելեմաքին պէս սրտագրաւ՝ քունն ու հանգիստը կը մոռնայ եւ ժամացոյցին կը պատուիրէ, որ չբանի, կամ գիշերին կ'աղաչէ որ չլուսնայ: Վասն զի Մկրտիչ Էֆենտի բնաւին չախորժիր առանձնութենէ, եւ ամէն գործի մէջ թէեւ առաջինը ըլլալուն նագ չընէր, բայց միայնակ մնալ չուզէր: Ազգային գործոց մէջ ասոր փորձն ստեպ կու տայ. ուրիշներէն առաջ նետուելէ եւ անոնցմէ աւելի գոհողութիւն ընելէ չքաշուիր, բայց երկու անփոփոխ պայման ունի. նախ՝ կ'ուզէ, որ իրեն հետեւող ցոյց տան, եւ երկրորդ՝ կը պահանջէ, որ իր մատուցած ծառայութիւնն ի վերայ տանեաց չքարոզեն եւ միայն ականջէ ականջ փափսան:

Այսու ամենայնիւ ո՛չ իր քսակը կը խնայէ ազգին եւ ոչ իր խելքը, եւ այսու կենդանի յանդիմանութիւն մը կը դառնայ այն անձանց, որք իրենց քսակն ազգին գլխէն վեր կը բռնեն, եւ դրամական գոհողութեան կարգն եկած ատեն՝ խնդրոյն համակարծիք դառնալով՝ կը գրաբանեն, եւ կամ շատ նեղը մտած ատեննին, նպաստի ձեռով պարգեւ (prime) մը կը վճարեն իրենց վերընծայալ դասէն սրբուելու վտանգին դէմ, ինչպէս որ սովոր են վճարել իրենց կալուածները հրդեհին դէմ ապահովելու համար:

Մկրտիչ Էֆենտի միշտ բարիք ընել կը փափաքի, այլ ըստ որում ս. պապին անսխալականութեան ամբարշտութիւնը չունի, եւ գիտէ, թէ չարիքն ալ մարդու

գործն է, գայն գործած ըլլալու համար՝ զաւկներ գգուած աստն կը կսմթէ, մօր դէմ երբեմն կամակորութիւն կ'ընէ եւ իւր սիրելեաց բարեկամները խօսքով կը կճէ, եւ այնչափ յառաջ կ'երթայ երբեմն, որ իրաւունք կու տայ կասկածելու, թէ մի գուցէ իւր սիրուելուն աստիճանը փորձելու միջոց մ'ըլլայ իւր այս վարմունքը:

Մկրտիչ Էֆենտի խիստ զգայուն է. զգայնութիւնն այն աստիճան նրբութեան հասցուցած է, որ կ'ըսեն, ամառը հովը փոխուելուն պէս հագուստ կը փոխէ, իսկ ձմռան մէջ տանն սենեկին յատուկ հագուստ ունի: Կը սիրէ, ինչ որ վսեմ է ծագմամբ, եւ անոր թերի կողմերուն հաշտ ակամբ կը նայի, կ'ատէ, ինչ որ նսեմ է սկզբմամբ, թէեւ հաճոյական հանգամանքներ ալ կրէ նա, որոց թէպէտ կը յափշտակուի ի սկզբան, բայց ամսէ մը աւելի չխաբուիր: Վայրկեաններ ունի, յորում արտառոց բաներ ընելէ հաճոյք կը զգայ, եւ գործելու նոր եղանակ մը հնարելով՝ զանոնք ազնուացնել կը ճգնի, բայց ուրիշներէ առաջ ինք կը համոզուի չյաջողելուն եւ շյամառիր: Չի ինքն, թէ դիւրագրգիռ եւ թէ լրջմիտ, կը թողու որ սոյն հակոտնեայ բնատրութիւնք ի պայքար ելնեն յանձինն, եւ մինչեւ որ լրջամտութեան յաղթանակ տանիլը չտեսնէ, չհանդարտիր:

Ժողովրդականաց ազատամտութեան վրայ կը սքանչանայ, ազնուապետականաց բարեկրթութեան վրայ կը հիանայ, եւ կը թուի, թէ մինչեւ որ այս երկու յատկութեանց յանձին իւրում ի մի ձուլմանը չհամոզուի, իւր արժանապատուութիւնը յագուրդ չպիտի գտնէ: Վասն զի Մկրտիչ Էֆենտի գիտէ, թէ փայլուն աստղի մը տակ ծնած է, գիտէ նաեւ թէ դէպքերը շատ անգամ գոմանս կը բարձրացնեն եւ երբեմն ալ գայլս կը խոնարհեցնեն, ուստի եւ մեծ սիրտ մը կը կրէ, մեծագոյն գաղափարներ կը սնուցանէ եւ ամենամեծ նպատակներ կ'առաջադրէ:

Մկրտիչ Էֆենտի միջին հասակով, թուխ գոյնով, սեւ աչքերով, խիտ մօրուքով, երկար փեղոյրով, գուարթադէմ, գիրուկ երիտասարդ մ'է: Երբ սոյն նկարագիրն ունեցող մէկուն հանդիպիս ճամբան, որ աճապարողի մը պէս կը քալէ եւ ամէն քայլափոխին միտքը բան մ'ինկածի պէս մէկ մի յաջ մէկ մի ձախ ետ դառնալու մտադիր կը թուի, գիտցի՛ր նա ինքն է՝ Մկրտիչ Էֆենտի Էսայեան: